

զարմանալի մեկնութիւնը : Պաշտկոն անով աղէկ ըմբռնեց , թէ որչափ մեծ ազգեցութիւն ունի գիտութիւնը կամ տգիտութիւնը մարդկութեան վրայ . յայտնապէս տեսաւ դարձեալ թէ ձըշ մարիտ իմաստութիւն ստացողներն են միայն արժանի տէրութիւն առաջնորդ ըլլալու : Այսկայն Պղատոն Ոկրատայ բերնովը զարմանալի հանձարով մը՝ նոյն իսկ այս իմաստութիւնը ստանալու համար՝ դժուարին արգելք մը մէջ կը բերէ : Հատ մարդիկ , կ'ըսէ , որ գերագոյն ճշմարտութիւնս ճանչնալու բաղդը ունեցան , խիստ քիչ անգամ փոյթ կ'ընեն երկրաւոր թշուառ կենաց վրայ անդրադարձութիւնելու , և ծանր գործոց և աշխատութեանց ձեռք զարնելէն ետ կը քաշուին : Ի՞ս մարդիկը , կ'ըսէ Պղատոն , կը կարծեն թէ Արանելեաց կղզիներուն մէջ կ'ապրին , բայց հանդերձ այնու հարկ չէ որ գործողութիւններն ալ ըստ բախտին վառուին : Եթէ տէրութեանց կառավարութիւնը ընելու յարմար չեն այն մարդիկը որ դաստիարակութիւն չեն ունեցած , և կարեւոր ճշմարտութիւնքը ճանչնալու անփոյթ , հաւասարապէս անյարմար են նաև անոնք որ բոլոր կեանքերնին ուսման զբաղելով կ'անցընեն : Այսկայն ընտիր անձանց ձեռքը յանձնելու է պետութեանց տեսչութիւնը : Ի՞սայց որո՞նք են արդեօք փնտուած այս ընտիր անձինքը . — Ի՞նոնք որ քիչ ատենի մը մէջ իրենք զիրենք բարձրացընելէն և գիտութեան բարիքը ձեռք ձգելէն ետքը , նորէն կը դառնան աշխարհքիս թշուառութեանցը կարեկից ըլլալու . անոնց աշխատութեանցը մասնակից են , և կերպով մը կը մօտենան անոնց գերութեան շղթանին քակելու , աչքերնին բանալ և կամաց կամաց արդարութեան և ճշմարտութեան փառաւոր ճամբաները առաջնորդելու :

տևական

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Թափչորին¹ :

Ճարափչութիւնն արուեստ է , որով բամբակի , կանեփոյ , քթանի , բրդոյ և մետաքսի վրայէն գունաւորիչ նիւթը կամ աղտեղութիւն սեպուած գոյնը թափել կու տանք զանոնք Ճերմկցընելու և յետոյ անոնց ուզած գոյներնիս տալու համար : Իուրդն ու մետաքսը աւելի սերտ միացած են գունաւորիչ նիւթոց հետ , անոր համար զանոնք գունաթափելը աւելի դժուար է : Ի՞ս հինգ նիւթոց Ճերմկցընելու եղանակը իրարմէ տարբեր ըլլալէն զատ , զամեն մէկը Ճերմկցընելու եղանակն ալ կը կախուի ետքի ընելու գործողութենէն . ուստի այս հատուածիս մէջ ամեն մէկուն վրայ առանձինն խօսինք : Ի՞ո՞նի ատենները բակէ լաթերը , կանեփէ ու քթանէ կրտաւները Ճերմկցընելու համար հասարակ ջրով կը թրջէին զանոնք ու արեւու կը փռէին . չորնալէն ետքը նորէն կը թրջէին ու նորէն արեւու մէջ կը չորցընէին այնչափ անգամ ինչուան որ բոլորովին Ճերմկի . բայց ետքի ատենները փոխանակ հասարակ ջրով թրջելու՝ սկըսան մոխրաջրով թրջել այլ և այլ անգամու արեւու մէջ չորցընել : Ի՞ս կերպով իրաւ լաթերը ու կտաւները կը Ճերմկին , բայց շատ ժամանակ կը կորսուի . գործողութիւնը փութով կը կատարի թէ որ թրջելու ջրին մէջ քիչ մը քլոր կամ կիրի քլորաւոր խառնուի : Վալորը իրաւ շուտ մը կը գունաթափէ , բայց մեծ զգուշութիւն ընելու է որ քլորաջուրը սաստիկ չըլլայ , ապա թէ ոչ լաթերը կ'այրէ : — Ասկ բուրդին ու մետաքսին գունաւորիչ նիւթը իւղային կամ խժային ըլլալով՝ զիրենք գունա-

թափելու համար պէտք է ալքալեան ջերմ ջրի մէջ այլ և այլ անգամ թրմել, և ամէն մէկ անգամ ալքալաջրէն հանելէն ետքը անոյշ ջրէ անցընել: Այս ալքալեան ջուրը բուրդին ու մետաքսին խւղային և խժային նիւթերը կը քակէ և բոլորովին կը մաքրէ: Ու երի ըսուած հինգ տեսակ նիւթերը ձերմկցը նելու համար ետքի ըլլալու գործողութիւնը ծծմքային թթու ջրով լուանալն է, միայն այն լաթերը որ ձերմակ գործածուելու են ու ներկուելու չեն. վասն զի թէ որ ետքէն ներկուելու լաթերը ծծմքաջրով ձերմկցընես, ետքի տալու գոյներդ կ'աղաւաղես: որովհետեւ անկարելի է որ կարենաս ծծումքը բոլորովին թափել տալ. ահա այս մնացած սակաւ ծծումքն է որ տալի ներկդ կ'աւրէ:

Բամբակեղենները ձերմկցընել :

Համբակէ լաթերը գործարանէն նորելած ատեննին մալակոնուած են խիժային գունաւորիչ ու խւղային նիւթերով, ալիւրով, գործաւորաց ձեռքին աղտօվը, երկաթի ոքսիտով, հողով ու փռշով:

— Խիժային նիւթերը բարկ օղիով ալքալեան ու թթուական ջրերով կը մաքրուին:

— Գունաւորիչ նիւթը բոլորովին կը թափի արեւու ճառագայթներով կամ քլորաջրով:

— Վոլայն, ալիւրը, սինձը՝ կ'ելլայ հասարակ ջրով ու կրաջրով:

— Կտաւագործները իրենց գործիքին պղնձէ սանդրը երբեմն կը ճարպեն, որով լաթին թելերը տեղ տեղ կ'եղութի: Խնչուան այս իւղը լաթերուն վրայէն բոլորովին չհանուի՝ անկարելի է զանոնք աղէկ ներկելը. մանաւանդ որ իւղու տեղուանքը ներկն աղէկ չըռնելով՝ այնպիսի բիծ կ'ընէ լաթին վրայ զոր դարմանելը անհնար է: Խթէ լաթին առեջքը քսանը զորս ժամու չափ միայն ժանգահար պղնձի սանտրին փակած կենայ, շատ դժուար բան է անոր

բիծը բոլորովին հանելը. ամենաթեթև ծծումքի թթուաջրով պղնձին ժանգը կը հանուի: — Խրբ եղութ լաթմը կրաջրի մէջ եփես՝ կրային սապոն մը կը ձեւանայ հօն, որն որ սոտաջրով շատ աղէկ կը մաքրուի: Քայտնի շշմարտութիւն է որ լաթերը եղութուելէն ետքը թէ որ վրան երկայն ատեն անցնի, կամ քացախի, ածխի ու հիտրոքլորի թթուներով թրջած մնայ, անկարելի կ'ելլայ ալքալեան ջրերով զանոնք մաքրելը:

— Պարծաւորաց ձեռացն աղտը հողն ու փոշին հասարակ ջրով միայն կը մաքրուին:

Այսչափ ընդհանրապէս զրուցելէն ետքը՝ անցնինք հիմա խօսելու բամբակելինի վրայ հետզհետէ ընելու գործողութեանցը:

— Ա. Ամեն բանէ առաջ պէտք է լաթերը եփ ջրի մէջ ձգել որ ամէն լուծուելու նիւթերը ելլան:

— Բ. Պէտք է երկայն ատեն ու առատ ջրով լուանալ. այս լուացումը ամենահարկաւոր է ետքէն գալի գործողութիւնքը դիւրաւ յաջողելու համար: Այս երկու գործողութեամբ լաթին ծանրութիւնը հարիւրին 16 կը պակսի, իսկ յետագայ գործողութիւններով հարիւրին 4 միայն կը պակսի:

— Գ. Պէտք է լաթերը եփել թեթև կրաջրով մը՝, որով իրեն վրայի խժային նիւթը կ'ելլայ և խւղային նիւթը կը սապոննայ:

— Դ. Քետ այսորիկ սոտաջրի՝ մէջ ձգելու է, որով սապոնացած ճարպին ու եղը կ'ելլայ. կ'ելլայ նաև գունաւորիչ նիւթոց մէկ մասը:

— Ե. Ասկէ ետքը լաթերը կամ փուելու է արեւու մէջ, կամ ձգելու է կը գաղջ քլորաջրոյ մէջ՝: Այս լոգարանին մէջ չափաւոր ատեն կենալէն ետքը պէտք է անկէ հանել ու տանիլ ծծրմբային թթուաջրի կամ հիտրոքլորաջրի մէջ՝:

— Զ. Արէն ալքալեան ջրի մէջ ձգելու է, որ քլորով կամ արեգական լուսով խիժացած գունաւորիչ նիւթերը թափին: Այս ելորդ է ըսելը, թէ հին-

գերորդ ու վեցերորդ գործողութիւնքը այնչափ անգամ կրկնելու է, ինչուան որ լաթը բոլորովին գունաթափի : Արնար մարդ քլորին ուժը աւելցընել և մէկ անգամ քլորաջրին մէջ թաթախելով ձերմկցընել՝ կրկին և կրկին թաթախ մունքը զանց առնելով, թէ որ քլորին այրելուն վախը ըլլար :

— Ե . Խտքի ձերմկութիւնը տալու է լաթին՝ գաղջ ու ամենաթեթև ծծըմ բային թթուաջրի մէջ՝ ձգելով զանիկայ, որով երկաթային ու կրային նիւթերը կ'ելլան : Ասկէ ետքը բազում մոտադրութեամբ պէտք է լուանալ անոյշ ջրի մէջ . վասն զի թէ որ առանց լուալու ըրցընես լաթը, ծծմբային թթուն կամաց կամաց կ'ուտէ թելերը ու կը փուցընէ : Այն թշուառութիւնը կը պատահի թէ որ ասանկ թթու լաթը սառոյցի տակ մնայ :

(Յէ) որ կ'ուզես ասանկ ձերմկած լաթը ներկել, պէտք է որ նորէն ալքալեան ջրէ՝ անցընես, որով գոյնը քիչ մը կը դեղնի՝ բայց ներկին չփնասեր : Աայց թէ որ չներկես պիտի՝ այլ ձերմակ պիտի պահես, ծծմբային թթու ջրէն հանելէդ ետքը նորէն քլորաջրով լուա, որով լաթին ձերմկութիւնը կ'ըլլայ ամենասպիտակ փայլուն :

Աայց այն լաթերն որ եղու չեն, ինչ պէս են բարակ բեհեզդները, յետագայ գործողութիւնքն ընդունելու են համառօտաբար . այսինքն Ա . եռացած ջրի մէջ ձգել զանոնք, Բ . ճմռելով լուանալ, Գ . արե դնել կամ թեթև քլորաջրի լոգարանին մէջ քիչ մը ատեն թողու, Դ . թեթև կրաջրի մէջ ձգել, Ե . ծծմբոյ թեթև թթուաջրի մէջ ձգել, և յետոյ անոյշ ջրով լուանալ : Այս ամեն գործողութիւնքը քիչ մը ատենի մէջ կը կատարուի, թէ որ այլ և այլ անգամ արե դնելու հարկաւորութիւն ըլլայ :

Պորձը ստուգեց, Ա . որ լաթը միակերպ երկու ժամու չափ թեթև կրաջրի մէջ եփուելով ամենեին չփնասուիր, միայն թէ լաթը եփելու ատեն ջրէն դուրս չմնայ, այլ միշտ ջրով ծածկած

ըլլայ : Բ . Լ աթը սոտայի լոգարանին մէջ (խտութիւնը 1,015) և տասը մըթնողութիւնը մէջ ամենա չփնասուիր, միայն թէ շատ շոգիանալով սոտային խտութիւնը չփնասուկանայ : Գ . Լ աթը չայրիր թէ որ ստաջրի մէջ (խտութիւնը ըլլալով 2,070) եփուի : Դ . Ութը ժամ կրոյ քլորաջրի մէջ թաթխած կենալով՝ ոչ կ'այրի ոչ կը չփնասուի : Ե . Լ աթը ութը ժամ միակերպ ծծմբի կամ հիտրոքլորի թթուաջրոյ մէջ կենալով (խտութիւնը 1,035) ամենեին չփնասուիր :

Կը շարունակուի :

(ԾԱՆ .) Լոգարանաց չափն այս է

1 Քլորաջուր	$\left\{ \begin{array}{l} \text{կրոյ քլորաւոր} \\ \text{շախ} \end{array} \right. \frac{1}{2}$ (կէս) քիլոկրամ.
	ջուր 30 լիդր :
2 Ծծմբաջուր	$\left\{ \begin{array}{l} \text{Ծծմբային թթու} \\ \text{ջուր} \end{array} \right. 6 \frac{1}{2}$ կամ 7
3 Ալքալաջուր	$\left\{ \begin{array}{l} \text{Սոտայ կամ բոդաս} \\ \text{ջուր} \end{array} \right. 100$
4 Կրաջուր	$\left\{ \begin{array}{l} \text{կիր} \\ \text{ջուր երեսուն քառասուն քիլոյ} \end{array} \right.$ լաթ թրջելու չափ : Կիրը առաջ քիչ ջրով յարելու է, ետքը մաղէ անցընելու . Կյետ այնորիկ լաթը թրջելու բաւական ըլլալու չափ ջուրը վրան առելցնելու է :

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Մրտած կարագը բացընել :

Ուիշտ անունով անգղիացի բնալոյծ մը հետեւեալ հնարքը կը բանեցընէ ծծուած կարագը լաւցընելու : Պիտք է կ'ըսէ, թարմ կաթով լսւ մը շաղուել զայն և ետքէն զուտ ջրով . և այսպէս կարագը թարմու մաքուր համմը կ'առնու, իբր թէ նոր շինուած ըլլար : Այս բանիս պատճառն է, կ'ըսէ, որովհետեւ կարագային թթուն, ուսկից ծծուածութեան հոտն ու համը առաջ կու գայ, շուտ մը թարմ կաթին մէջ կը լուծուի, որով այս ծծուածութիւնը կ'անցնի :

